Համաձայնագիր-2
12.07.2024թ. կնքված N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-24/70 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Տաշիր 04 **օգոստոսի 2024թ.**

«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»-ը, ի դեմս համայնքի ղեկավար Է. Արշակյանի, որը գործում է «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՅԱՅ ՍԵՔ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ավագյանի, որը գործում է «ԱՅԱՅ ՍԵՔ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 12.07.2024թ. կնքված N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-24/70 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով կողմերի միջև 12.07.2024թ.-ին կնքված ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար տեսահսկման համակարգի տեղադրման ծառայությունների մատուցման N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-24/70» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1.1.1 Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» N1 հավելվածով՝ սահմանված ծառայությունների մատուցման ժամկետը երկարացնել 30 օրացուցային օրով և ծառայության մատուցման վերջնաժամկետ սահմանել 03.09.2024թ.:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական, որոնցից մեկ օրինակը հանձնվում է Կապալառուին, իսկ մյուս օրինակը՝ Պատվիրատուին:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան	**<<ԱՅԱՅ ՍԵՔ>> ՍՊԸ**
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94	**ՀՀ ք. Երևան, Խորենացի 28**
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	**Բանկը՝ Կոնվերս բանկ ՓԲԸ**
Հ/Հ 900272101024	**Հ/Հ 1930052710620100**
ՀՎՀՀ 06966995	**ՀՎՀՀ 04423755**
----------Է. Արշակյան	**---------- Ա. Ավագյան**
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
Կ.Տ.	**Կ.Տ**